ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվական թիվ 28 -Ա

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍԵԼԱՎՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 15 հոդվածի ա), դ) և զ) կետերի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հաստատել 2026 թվականի Արփա և Եղեգիս գետերի հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ, կանխարգելիչ միջոցառումների իրականացման ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել համայնքի ղեկավարներին հեղեղավտանգ և սելավավտանգ տեղամասերում նախատեսել պետական և համայնքային բյուջեներով, սուբվենցիոն ծրագրերով, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների միջոցներով կանխարգելիչ միջոցառումներ:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026թ. փետրվարի 6
ք. Եղեգնաձոր